«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ընտանիքի դերը կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացում
ԱՌԱՐԿԱ	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Սոնա Արամյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Քաղսիի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ——— 2

Ընտանիքի դերը կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացում ——— 5

Եզրակացություն ——— 18

Գրականության ցանկ ——— 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան դաստիարակության, ընտանեկան փոխհարաբերությունների և ընդհանրապես ընտանիքի հիմնախնդիրները ներկայումս դարձել են առավել արդիական: Ինչպես մանկավարժների ու հոգեբանների, այնպես էլ ծնողների և, ընդհանրապես, հասարակության կողմից գիտակցվում է, որ աճող սերնդի դաստիարակության գործում մեծ է ընտանիքի դերը: Ընտանիքը հասարակության սկզբնական բջիջն է: Երեխայի դաստիարակությունը հարկավոր է սկսել ծնվելուն պես:

Մանկապարտեզում դաստիարակը սովորեցնում և դաստիարակում է, իսկ հայրն ու մայրը, ապրելով երեխայի հետ, հաղորդակից լինելով բազմաթիվ կենսապայմաններում՝ երեխաներ ի վրա ներգործելու ավելի լայն հնարավորություն ունեն:

Ընտանեկան դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին պայմանը համերաշխ ընտանիքի առկայությունն է: Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են հանգիստ, հավասարակշռված, եռանդուն ու կենսուրախ մարդիկ:

Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների հետ: Դա բարդ հարց է, որի լուծման ժամանակ առաջնակարգ նշանակություն է ստանում խստության և քնքշության չափը: Չի կարելի անընդհատ սիրել երեխային, անընդհատ գովասանքի արժանացնել, խրախուսել, կատարել նրա բոլոր պահանջները կամ ընդհակառակը, երեխային անընդհատ պարսավանքի ենթարկել, պատժել և այլն: դրանք բոլորը պետք է լինեն չափավորված ու դուրս չգան անհրաժեշտության սահմաններից:

Շատ ծնողներ, քաջ գիտակցելով երեխայի դաստիարակության ժամանակ իրենց դերը, երբեմն մոռանում են ուսուցման ընթացքում անհրաժեշտ դերի մասին, կամ կարծում են, որ երեխայի ուսուցումը պարտավոր է իրականացնել միայն մանկապարտեզը կամ դպրոցը: Աշխատանքի համար ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է թե՛ գիտական և թե՛ պրակտիկ գործոններով: Լինելով երեխայի սոցիալականացման առաջին օղակը՝ ընտանիքը մշտապես համարվել է երեխայի անձի դաստիարակության

կարևոր գործոն: Հայտնի իրողություն է՝ ծնող-երեխա փոխհարաբերությունները, որոնք ձևավորվում են ընտանեկան դաստիարակության հենքով, կազմում են ընտանիքում հարաբերությունների կարևորագույն և ամբողջական համակարգ: Այդ հարաբերությունները հույժ կարևոր են կրտսեր դպրոցականի անձի ձևավորման, նրա հոգեկանի բարենպաստ զարգացման և լիարժեք սոցիալականացման համար: Հետևաբար՝ ընտանեկան ոչ ճիշտ դաստիարակությունը, դրա գործառույթների ոչ լիարժեք կատարումը կարող է խախտել ծնող-երեխա նորմալ հարաբերությունները՝ առաջ բերելով էական դժվարություններ երեխայի վարքի և, ընդհանրապես, նրա անձի ձևավորման մեջ:

Վերջին ժամանակներում բավականին սրացել է ծնող-երեխա փոխհարաբերությունների, ընտանեկան դաստիարակության և կրտսեր դպրոցականի անձի ձևավորման վրա դրանց ունեցած ազդեցության խնդիրը՝ կապված արդի հասարակության գլոբալացման, ներկայիս սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի, տեղեկատվության հասանելիության ու մեծ հոսքի և այլ գործոնների հետ: Ուստի կարելի է պնդել, որ կրտսեր դպրոցականների ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրն արդի հասարակության առջև ծառացած հրատապ խնդիրներից է: Սույն խնդրի ուսումնասիրումն ու հետազոտումն ինչպես սոցիալ-հոգեբանական, այնպես էլ մանկավարժական ու հասարակական արդիական հիմնախնդիրներից է:

Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ընտանիքի դերը կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացում:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ տարբեր տեսական մոտեցումները, մեկնաբանությունները:
- Լուսաբանել ընտանեկան դաստիարակության դերը կրտսեր դպրոցականի դաստիարակության գործում:

ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դարեր շարունակ երեխաների դաստիարակությունն իրականացվել է ընտանիքում և ուսումնական հաստատություններում: Սովորաբար երեխաների դաստիարակությունը իրականացվում է ընտանիքի և ուսումնական հաստատությունների համատեղ ջանքերով: Սակայն գիտնականներն այս հարցում տարակարծիք են: Ոմանք առավել նշանակալից են համարում ընտանիքի դերը և ավելի ցածր են գնահատում ուսումնական հաստատությունների դերը: Մի խումբ գիտնականներ ընտանիքը համարում են էգոիզմ սերմանող և դեմ են ընտանեկան դաստիարակությանը: Իսկ մեկ այլ խումբ դաստիարակությունը համարում է ընտանիքի և ուսումնական հաստատությունների գործունեության ամբողջություն:

Երեխայի դաստիարակության և զարգացման վրա անփոխարինելի ներգործություն ունի ընտանիքը, հատկապես ծնողների միմյանց հանդեպ ունեցած սերը: Կարևոր նշանակություն ունի ընտանիքի անդամների միջև ստեղծել պատասխանատվության և հարգանքի զգացում: Բազմաթիվ անվանի հոգեբանների և մանկավարժների հետազոտությունները ցույց տվեցին, որ ընտանիքում տիրող մթնոլորտը, ընտանեկան դաստիարակությունը ու ընտանիքին առնչվող այլ հանգամանքներ երեխայի անձի ձևավորման և նրա անձնային ուղղվածության վրա շատ լուրջ ազդեցություն են թողնում: Ընդ որում՝ որոշ իմաստով հաստատվում է նաև այն վարկածը, որ երեխայի անձի հակասոցիալական ուղղվածությունը նույնպես պայմանավորվում է այն ընտանիքի տիպով, ուր մեծանում է երեխան:

Հոգեբանության և մանկավարժության ասպարեզում չունենալով պահանջվող գիտելիքներ և փորձ՝ երբեմն ծնողները թույլ են տալիս բազմաթիվ սխալներ, որոնք հետագայում կարող են հանգեցնել անցանկալ հետևանքների: Ընտանեկան սովորույթները, մանկավարժական փորձը, ներըմբռնումը և սերը երեխայի նկատմամբ, անշուշտ, նրա զարգացման գործընթացը հասկանալու և ղեկավարելու հուսալի գործոններ են:

Ընտանիքն այն օղակն է, ուր իրականացվում է երեխայի անձնավորության ձևավորման բարդ ու պատասխանատու մանկավարժական խնդիրը: Հենց ընտանիքն է դնում այն հիմքը, որի վրա երեխան հետագայում՝ մեծերի օգնությանմբ, բազմապատկում ու կատարելագործում է իր գիտելիքները, ընդունակություններն ու կարողությունները: Ընտանիքը երեխայի համար մի աշխարհ է, ուր նա սովորում է սիրել, ապրել, ուրախանալ, կարեկցել: Ընտանիքում են արմատավորվում նրա առաջին բարոյական զգացմունքներն ու համոզմունքները, համատեղ փոխհարաբերությունների առաջին քայլերը: Այդ փորձերն սկսում են երեխայի և նրա ամենամոտ մարդկանց՝ հոր ու մոր առաջին իսկ շփումից: Շփումն առհասարակ հարստացնում է երեխայի կոնսափորձը, գիտելիքների պաշարը, ձևավորում բարոյական զգացմունքներ, նրա դիրքորոշումը շրջապատող աշխարհի նկատմամբ: Նման պայմաններում երեխայի անձնավորության ձևավորման կարևոր գործոն է ծնողների անձնական օրինակը: Ծնողը երեխայի համար մարդկային փորձի, վարքի, չափանիշների կենդանի կրողն է և բարոյական զգացմուքնների ու պատկերացումների արտահայտիչը: Ծնողները պետք է ընդունակ լինեն հասկանալու հենց իրենց՝ երեխաների ներաշխարհը, կարողանան ստեղծել փոխադարձ սիրո և հարգանքի վրա հիմնված փոխհարաբերություներ: Եթե ընտանիքում երեխան զուրկ է քնքշանքից, ուշադրությունից, խնամքից, հոգեկան ջերմությունից, եթե նրան չեն հասկանում, չունի իր առջև դրական կերպարներ, ապա որպես անձնավորություն նա շատ դանդաղ կձևավորի, կյանքում կդառնա անտարբեր ու աննրբանկատ մարդ: Ոչ մի հասարակական դաստիարակչական հաստատություն չի կարող փոխարինել ընտանիքին: Երեխան նախ և առաջ կարիք ունի ծնողական գուրգուրանքի:

Կրտսեր դպրոցական տարիքում արդեն երեխան ունի իր որոշակի տեղը ընտանիքում և ընտանեկան իրական փոխհարաբերություններում: Դա անպայման իր կնիքն է դնում անձնավորության բարոյական հատկանիշների և առանձնահատկությունների ձևավորման վրա: Համերաշխ ընտանիքների, որ ծնողների հասարակական և բարոյական դիրքորոշումն ու գործունեությունը համապատասխանում են մեր հասարակության նպատակներին ու ընդհանուր խնդիրներին, մեծանում են բարի և մարդկային դրական գծերով օժտված երեխաներ: Նրանք պատրաստ են հաշվի նստելու մյոսների պահանջների հետ, ցուցաբերում են պարտքի և

պատասխանատվության զգացում, հաճույքով մասնակցում ընտանիքի և մանկապարտեզի ընդհանուր գործերին:

Անհամերաշխ ընտանիքում, ուր չկան ընտանեկան և մանկավարժական ուժերի ճիշտ տեղաբաշխում, ընդհանուր պահանջներ, բովանդակալից շփում երեխաների և մեծահասակների միջև, մանկան հետաքրքրությունների նկատմամբ ուշադրություն, երեխաները սոցիալապես պասիվ են, չշփվող, չեն մասնակցում ընտանիքի կյանքին և աստիճանաբար հեռանում են ընտանիքի անդամներից: Մեծ դեր ունեն ընտանիքի սոցիալական դիրքորոշումների և արժեքների գնահատման համակարգը, ընտանեկան ավանդույթները: Պակաս կարևոր չեն նա և ծնողների մանկավարժական կրթությունն ու կուլտուրան, ընտանիքում երեխաների կյանքն ու գործունեությունը ճիշտ կազմակերպելու հմտությունը: Ընտանեկան դաստիարակության համար կարևոր նշանակություն ունի չափավորությունը. այսինքն երեխային պետք չէ անընդհատ պատժել և պետք էլ չէ անընդհատ երես տալ նրան, կատարել նրա բոլոր պահանջները: Դաստիարակությունը պետք է ուղղված լինի երեխային տարբեր ուղղություններով զարգացնելուն, նրա մեջ պետք է սերմանվի աշխատասիրության ջիղ: Երեխաներին մանկուց պետք ծանոթացնել հաղորդակցման հմտություններին: Ծնողների անձնական օրինակը մեծ նշանակություն ունի:

Ընտանեկան միջավայր ասելով մենք նկատի ունենք ընտանիքի անդամների փոխհարաբերությունները և սովորությունները, նրանց աշխատանքը և վերաբերմունքը հասարակական կյանքի, երևույթների նկատմամբ: Դա երեխայի համար ամենահարազատ միջավայրն է, այստեղ են սկսում զարգանալ նրա ֆիզիկական և հոգեկան ուժերը, այստեղ է նա ստանում առաջին տպավորություններն ու մտապատկերները կյանքի վերաբերյալ: Մինչև մանկապարտեզ կամ դպրոց հաճախելը փոքրերի համար ընտանիքը հանդիսանում է գրեթե միակ հասարակական միջավայրը, ու խարսխվում են նրանց առողջության և բնավորության հիմքերը, ուր զարգանում են նրանց հարցասիրությունը, ուր ձևավորվում են նրանց վարքի որոշ հմտությունները:

Անհերքելի է, որ երեխաների դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում ընտանիքը: Այստեղ ծնողները աշխատում են զարգացնել երեխաների ընդունակությունները, հետևել նրանց առողջությանը և ձևավորել նրանց բարոյական

հատկությունները[1]: Ընտանեկան միջավայրի ազդեցությունը երեխայի վրա դրսևորվում է ընտանիքի կյանքի ընդհանուր բնույթով, նրա անդամների օրինակի և խոսքի միջոցներով: Ընտանիքը, որպես հասարակական մի բջիջ առհասարակ կապված է հասարակական կյանքի հետ և շրջապատի բոլոր կարևոր իրադարձությունները իրենց արձագանքն են գտնում այնտեղ: Ծնողների լավատեսությունը, հայրենասիրությունը, նրանց կենսուրախությունը և հասարակական ակտիվությունը ընտանեկան միջավայրը դարձնում են կենսուրախ և հասարակայնորեն առողջ: Լուրջ նշանակություն ունի նաև ընտանիքի կյանքի կազմակերպվածությունը, որոշակի կարգ ու կանոնը, սովորույթները, ավանդույթները, բնակարանի տեսքը նույնպես որոշում է ընտանիքի կյանքի ընդհանուր բնույթը: Եթե ընտանիքում գոյություն ունի որոշ կարգ ու կանոն, քնից արթնանալու, նախաճաշի, ճաշի, ընթրիքի ժամանակ և այդ դարձել է կենցաղ, եթե ստեղծված են որոշ կայուն ավանդույթներ կապված ծննդյան տարեդարձի, տոն և կիրակի օրերին զբոսանքի գնալը, եթե բնակարանը ձևավորված է պարզ, ճաշակով, պահվում է միշտ հավաքված և մաքուր՝ նշանակում է ընտանիքի կյանքը կազմակերպված է: Այս ամենը երեխայի մեջ առաջ են բերում կարգապահություն, ճշտապահություն ընտանիքի նկատմամբ պատվի և սիրո զգացմունք և հակառակը:

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոցներից է նաև ընտանիքի անդամների անձնական օրինակը: Վաղուց հայտնի է, որ երեխայի բնությանը հատուկ է ընդօրինակելը : Երեխան մշտապես դիտում է իրեն շրջապատող մարդկանց, նրանց գործերը, տեսնում է նրանց վերաբերմունքը մյուս մարդկանց ու երևույթների նկատմամբ և աննկատելիորեն ընդօրինակում: Սակայն երեխան ընդօրինակում է ոչ միայն դրականը, այլև բացասականը: Երբեմն ծնողները տեսնելով երեխայի այս կամ այն բացասական հատկությունները, մնում են զարմացած, այնինչ դրանց արմատները շատ հաճախ գտնվում են ընտանիքում, ծնողների արարքներում:

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոց է ընտանիքի անդամների խոսքը: Ընտանիքում թե՛ կրտսեր, թե՛ ավագ անդամները հաղորդում են իրենց տպավորությունները տեսածի և լսածի վերաբերյալ, պատմում իրենց աշխատանքային գործունեության և շրջապատի կյանքի կարևոր դեպքերի մասին : Խոսքի օգնությամբ

[1] Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան 2004թ.

քննարկվում են բազմազան հարցեր, ծնողները երեխաներին տալիս են խորհուրդ, բացատրություն:

Ընտանիքի կարևորությունը երեխայի դաստիարակության հարցում պայմանավորվում է նրանով, որ այնտեղ երեխան գտնվում է իր կյանքի զգալի մասի ընթացքում, և ըստ տեղության՝ ինստիտուտներից ոչ մեկ չի կարող համեմատվել ընտանիքի հետ: Նրանում ներկայացվում են երեխայի անձի հիմքերը, և դպրոց մուտք գործելիս նա արդեն կիսով չափ ձևավորվել է որպես անհատ:

Ընտանիքը կարող է դառնալ ինչպես դրական, այնպես էլ դաստիարակության բացասական գործոն: Դրական ազդեցությունը երեխայի անձի վրա այն է, որ ոչ-ոք, բացի ընտանիքի անդամներից, չի վերաբերվում երեխային ավելի լավ, չի սիրում նրան այնքան և բավական հոգ չի տանում: Ընտանիքը հատուկ տիպի կոլեկտիվն է, որ դաստիարակությունում խաղում է հիմնական, երկարատև և կարևորագույն դեր: Անհանգիստ մայրերի մոտ հաճախ աճում են անհանգիստ երեխաներ և այլն:

Կապված ընտանիքի հատուկ դաստիարակչական դերի հետ, առաջանում է հարց այն մասին, ինչպես անել այնպես, որպեսզի մեծացնել դրականը և նվազագույնի հանգեցնել ընտանիքի բացասական ազդեցությունները երեխայի դաստիարակությանը: Դրա համար անհրաժեշտ է հստակ սահմանել ներընտանեկան սոցիալ-հոգեբանական գործոնները, որ ունեն դաստիարակչական նշանակություն:

Գլխավորը մարդու դաստիարակությունում հոգեկան միավորման ձեռքբերումն է, երեխայի հետ ծնողների բարոյական կապը:

Հենց ընտանիքում է երեխան ստանում առաջին կենսական փորձը, կատարում է առաջին հետևությունները և սովորում ինչպես վարվել տարբեր իրավիճակներում: Շատ կարևոր է, որպեսզի այն, ինչին մենք սովորեցնում ենք երեխային, ամրապնդվել է կոնկրետ օրինակներով, որպեսզի նա տեսնի, որ մեծահասակների մոտ թեորեմը չի նույնացվում պրակտիկայի հետ[2]:

[2] Լ. Վ. Թորգոմյան, «Մանկավարժության ընդհանուր հիմունքներ», Երևան, 2005:

Երեխաների կրթության իրականացման գործում մեծ դեր է կատարում ծնողուսուցիչ-դպրոց օղակը: Մեր հասարակությանն արժանի քաղաքացի դաստիարակելու նպատակով պետք է համագործակցեն ծնողները և ուսուցիչները:

Անցել են այն ժամանակները, երբ ծնողը բավարարվում էր առավոտյան երեխային դպրոց բերելով և կեսօրին տուն տանելով: Իսկ թե երեխան ինչպես կդրսևորեր իրեն դպրոցում, դիտվում էր միայն որպես ուսուցչի մտահոգության խնդիր: Այլ են հիմա ժամանակները և պահանջները: Այսօրվա սերունդը պետք է քայլի ժամանակին համընթաց, լինի բանիմաց, անկաշկանդ, իմանա ու գիտակցի իր իրավունքներն ու պարտականությունները:

Առանց ծնողների օգնության և աջակցության հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել: Ծնողների հետ շփումն օգնում է ուսուցչին՝ տեղյակ լինել, թե ինչ է կատարվել տանը երեխայի հետ, որ այս կամ այն կերպ ազդել է նրա հոգեբանության, վարքի և տրամադրության վրա: Դա ուսուցչին թույլ է տալիս հասկանալ ու օգնել երեխային: Ընդ որում, այդ օգնության կարիքը զգում են ոչ միայն երեխաները, այլև ծնողները: Անհրաժեշտ նրա գիտակցությանը հասցնել, որ իրենք միայնակ չեն, իրենց կողքին են ուսուցիչները, մյուս ծնողները և ընկերները:

Ընտանիքը և դպրոցը դաստիարակության երկու հիմնական հավասարազոր սուբյեկտներ են, որոնք ազդում են երեխայի վրա մանկության և պատանեկության տարիներից: Միայն այս երկու օղակների համագործակության դեպքում է հնարավոր ձևավորել աշակերտների մեջ բարձր բարոյական որակներ, ապահովել նրանց աշխատանքային ուսուցումն ու մասնագիտական կողմնորոշումը: Ծնողները պետք է ակտիվ մասնակցեն մանկավարժական գործընթացում:

Համագործակցության ընթացքում ծնողները պետք է նկատեն ուսուցիչների կողմից թույլ տված սխալները, և ուսուցիչները՝ ծնողների կազմակերպած ընտանեկան դաստիարակության ընթացքում նկատված սխալները: Սակայն փոխքննադատությունը պետք է լինի հիմնավորված ու կառուցողական:

Ծնողների հետ հիմնական աշխատանքը դպրոցն անցկացնում է ծնողական միավորումների միջոցով, որոնք կրում են տարբեր անվանումներ՝ ծնողական

կոմիտեներ, խորհուրդներ: Յուրաքանչյուր միավորում ունի իր կանոնադրությունը, որի մեջ նշված են դաստիարակության գործընթացի հիմնական ուղղությունները, իրավունքներն ու պարտականությունները: Ծնող-դպրոց ավելի անկաշկանդ ու հաճելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է, որ ծնողն իրեն ազատ ու վստահ զգա: Իսկ ինչպե՞ս հասնել այդպիսի արդյունքի: Դրա համար ուսուցիչն է հանդես գալու առաջարկներով ու նախաձեռնություններով[3]:

Ծնողների հետ հիմնական աշխատանքն անցկացվում է ծնողական ժողովների, նամակների, զրույցների, խորհրդատվության, տնային այցելությունների միջոցով:

Ուսուցիչը կապեր հաստատելով աշակերտի ընտանիքի հետ՝ լուծում է հետևյալ խնդիրները.

- Ճանաչել երեխայի ընտանիքը:
- Ուսումնասիրել երեխայի սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա անձի ձևավորման վրա:
- Օգնել ծնողներին՝ ընտանեկան պայմաններում երեխային դաստիարակելու:
- Կազմակերպել ծնողների մանկավարժական իրազեկումը:

Երեխաների մասին հոգալը, նրանց դաստիարակելն ու նախապատրաստելը սոցիալական օգտակար գործունեության (ուսումնական, աշխատանքային, մշակութային-կենցաղային և այլ) հասարակության կողմից ընտանիքին ներկայացվող հիմնական պահանջներից են: Մեր ապագա հասարակությանը պիտանի, արժանի քաղաքացի դաստիարակելու հաջողությունը պայմանավորված է ծնողների մանկավարժական կուլտուրայով, նրանց բարոյական բարձր գիտակցությամբ, զգացմունքներով ու վարքով[4]:

Դաստիարակչական ներգործություններն ընտանիքում դրական արդյունքի են հասնում այն ժամանակ, երբ երեխան նախապես հոգեբանորեն տրամադրված է որոշակի գործունեության: Դրա համար կարևոր է ծնողների հեղինակությունը: Ընդ որում՝ երեխաների համար ընդունելի են դառնում ծնողների միայն այն արարքները,

---

[3] Концепция дошкольного воспитания, Москва. 2000. [4]
Концепция дошкольного воспитания, Москва. 2000.

որոնք ուժգնորեն ազդում են նրանց զգացմունքների և գիտակցության վրա: Հարկ էնշել, որ դրանք երեխաների վարքագծում անպայմանորեն դրսևորվում են: Ծնողների մանկավարժական տակտը, երեխաների հետաքրքրությունների և պահանջների նկատմամբ նրանց ուշադիր վերաբերմունքը նպաստում են հավասարակշռված, հանգիստ վարքով, կենսուրախ տրամադրությամբ երեխայի ձևավորմանը: Հայտնի է, որ երեխաներն իրենց բնույթով ընդհանուր առմամբ ակտիվ ու գործունյա են: Խիստ կարևոր է, որ այդ ակտիվությունը մեծահասակներն օգտագործեն խելամիտ և նպատակաուղղված ձևով: Անհրաժեշտ է, որ երեխան ընտանիքում ունենա աշխատանքային մշտական հանձնարարություն: Նա սովորելով է ամեն օր պարբերաբար կատարում իր ուժերին համապատասխան որոշակի աշխատանք, օգնում է սեղան բացել և հավաքել, պատրաստել դասերը, դասավորել իր խաղալիքները: Նրա մեջ սովորույթ է մշակվում անհանգստանալ ծնողների, քույրերի, եղբայրենրի համար: Երեխաներին մեծահասակների աշխատանքային գործունեությանը ծանոթացնելը նպաստում է աշխատանքի և այն իրականացնող մարդու հանդեպ հարգանքի ձևավորմանը: Աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը և դրական վերաբերմունքն ամրապնդվում և կայունանում է այն ժամանակ, երբ երեխան անձամբ մասնակցում է իր ուժերին համապատասխանող որևէ աշխատանքի, ուրախանում ստացված արդյունքով, գիտակցում դրա նշանակությունն ու օգտակարությունը:

Կարևոր նշանակություն ունի ծնողների՝ հոր և մոր համատեղ մասնակցությունը դաստիարակչական գործընթացին, համագործակցությունը ներընտանեկան կյանքում, փոխադարձ օգնությունը, աշխատանքի արդարացի բաժանումը, հոգեբանամանկավարժական գիտելիքների և գործնական հմտությունների մակարդակը:

Պարզելու համար ընտանիքի ազդեցությունը երեխաների ուսուցման գործընթացի վրա, կատարել եմ հետազոտություն:

Ուսումնասիրությունն իրականացվել է Չարենցավանի միջնակարգ դպրոցներից մեկում՝ II Բ դասարանում: Օգտագործել եմ «Ընտանեկան կրթության վերլուծություն» (E. G. Eidemiller and V. Justickis) հարցաշարը, որի նպատակն է բացահայտել ընտանիքի դերը տարրական դպրոցական տարիքի երեխաների դաստիարակության գործում: Այս հարցաշարի միջոցով կարելի է նաև բացահայտել, թե ինչ չափանիշներով պետք է որոշեք

կրտսեր դպրոցականի դաստիարակության առանձնահատկությունները, ամենահեշտն է ընտանիքները տարբերակել դաստիարակության ոճերի, այսինքն՝ դաստիարակության ինչ համակարգի վրա է կառուցված ընտանիքը: Հետազոտությունը ենթադրում է 10 հոգու մասնակցություն: Փորձարկվողները ծնողներ են: Հաստատելով տվյալ ընտանիքի ընտանեկան դաստիարակության ոճը՝ մենք կկարողանանք պնդել կրթության առանձնահատկությունների մասին, որոնց միջոցով հնարավոր է որոշել կրտսեր դպրոցականի բնավորության գծերը: Հարցաթերթից վերցրել եմ միայն առաջին տասնմեկ սանդղակները:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ 10 ընտանիքից 2-ը ունենում է դժվարություններ, թե ինչպես կրթի կրտսեր դպրոցականին: Այս ընտանիքները չեն կարողանում որոշել, թե ինչն է կարևոր իրենց երեխայի համար: Նրանք, որպես կանոն, ունենում են կրթության զգալի տատանումներ: Նրանց դաստիարակության և կրթության մեթոդները կտրուկ փոփոխվում են՝ շատ խիստ ոճից միչև երեխայի նկատմամբ նշանակալի մերժում և, նույնիսկ, հուզական մերժում: Այս ընտանիքներն ավտորիտար տիպի ընտանիքներ են:

Ընտանիքների մյուս տեսակը՝ 3 ընտանիք,լիբերալ ընտանիքներ են, երեխային դաստիարակելու համար հատուկ ջանք չի կիրառում: Այսպիսի ընտանիքներում երեխան մնում է ինքն իր հայեցողությամբ և կարելի է ենթադրել, թե կրտսեր դպրոցականի մոտ ինչ որակներ կարող են ձևավորվել, քանի որ այս երեխան «կարող է ամեն ինչ անել»: Ուսումնասիրությունից հետո, չգիտես ինչու, այս ծնողներրն ասել են, որ իրենք բավարար ժամանակ չունեն ընտանիքում երեխայի լիարժեք դաստիարակություն իրականացնելու համար: Այսպիսի ընտանիքներում գերակշռում է պարտականությունների բացակայություն: Երեխան ընտանիքում ունի շատ քիչ պարտականություններ և ծնողները մեծ դժվարությամբ են ներգրավում որևէ գործի մեջ:

Ընտանիքների դաստիարակության տեսակների երրորդ ենթախմբի մեջ մտնում են այսպես ասած ավտորիտար ընտանիքները՝ 3 ընտանիք: Այսպիսի ընտանիքները չեն շեշտադրում «ճիշտ» դաստիարակությունը, երեխայի զարգացման հետևողականությունը և բառի բուն իմաստով լիարժեք նվիրվածությունը: Այսպիսի մոտեցումը վնասում է կրտսեր դպրոցականի զարգացմանը, վտանգում է երեխայի զարգացումն ու դաստիարակության

գործընթացը: Նրան ներկայացվում են մեծ քանակությամբ արգելքներ, որոնք սահմանափակում են նրա ազատությունն ու անկախությունը և չեն համապատասխանում նրա հնարավորություններին: Երեխան դառնում է ծնողների ազդեցության առարկա: Այստեղ կարող ենք ասել այն մասին, որ երեխան կարող է դառնալ ինքնամփոփ, չշփվող, որի հետևանքով էլ՝ սոցիալապես չհարմարվող և արդեն կունենա թերաժեքության զգացում, անհարմարվողականություն: Ի դեպ, այսպիսի ընտանիքների աճի տենդենց կա՝ ովքեր չեն ձգտում բավարարել իրենց երեխաների կարիքները: Այսպիսի ընտանիքներում շատ հաճախ են ոտնահարվում երեխաների իրավունքներն ու հույզերը, նրանք չեն ստանում բավարար սեր և ջերմություն ընտանիքի կողմից, կորցնում են իրենց հուզականությունը:

Կան նաև դեմոկրատ տիպի ընտանիքներ: Այս տիպի ընտանիքները երեխաներին դաստիարակում են լավ սկզբունքներով, դրական հիմունքներով, փոխադարձ աջակցության և միմյանց անշահախնդիրօգնության վրա, դրա հիման վրա կրտսեր դպրոցականի մոտ ձևավորվում են անհատականության դրական գծեր, որոնք ազդում են երեխայի հետագա դաստիարակության վրա:

Ուսումնասիրության ընթացքում պարզ է դառնում, որ ավտորիտար ընտանիքներում դանդաղում է երեխայի բարենպաստ, համակողմանի դաստիարակությունը՝ ուղղված երեխայի անձի քայքայմանը: Լիբերալ ընտանիքներում ծնողներն ակտիվորեն չեն մասնակցում կրտսեր դպրոցականի դաստիարակությանը: Ընտանիքների 20 տոկոսը, որտեղ հուսահատություն կա երեխայի դաստիարակության հարցում, կա միայն անորոշություն կրթության մեթոդների ընտրության, զարգացման ճիշտ ուղու հարցում: Եվ վերջին՝ ժողովրդավարական ընտանիքներում ընտանեկան մթնոլորտը դրական է, լիարժեք դաստիարակության իրականացման համար: Տոկոսային առումով առաջատար են ավտորիտար և լիբերալ ընտանիքները, այլ ոչ թե՝ ժողովրդավարական: Մենք տեսնում ենք, որ երեխայի զարգացումը, նրա անձնային որակների ձևավորումը պայմանավորված է ընտանիքում կրթության մակարդակով: Եթե դա ավտորիտար ընտանիք է, ապա, ինչպես արդեն ասացինք, շատ դեպքերում դրվում են բնավորության բացասական գծեր: Նույնը կարելի է ասել նաև լիբերալ ընտանիքի մասին, որտեղ ընտանիքի հեղինակությունը դեր չի խաղում: Ամենաընդունելին այն ընտանիքն է, որտեղ

ծնողներն ու ծնողներն ու երեխաները համագործակցում են միմյանց հետ: Ուստի ընտանիքի մասնակցությունն ամենակարևոր և անհրաժեշտ հիմքն է կրտսեր դպրոցականի դաստիարակության կառուցվածքում: Ուստի ընտանիքի մասնակցությունն ամենակարևոր և անհրաժեշտ հիմքն է կրտսեր դպրոցականի դաստիարակության կառուցվածքում:

Իմ կարծիքով այս խնդիրը բացատրվում է հասարակության ներկա վիճակով, որտեղ ընտանիքի կենսամակարդակը հնարավոր չէ առանց նյութական հարստության: Հուսահատության պատճառով ծնողները ստիպված են աշխատանքային ապրելակերպ վարել՝ իրենց երեխաներին արժանապատիվ կենսամակարդակ ապահովելու համար: Ծնողների առաջնահերթությունը տուն գումար մտցնելն է, որի շնորհիվ, ըստ ծնողների, ընտանիքը կդառնա ընտանիք և կկարողանա ընտանիք համարվել: Ուստի հղման կետը ոչ թե երեխան է, այլ աշխատանքը: Ընտանիքը չի տեսնում, որ հիմնական արժեքը պետք է լինի երեխան՝ իր կարիքներով, ցանկություններով, հետաքրքկություններով, վարքի դրդապատճառներով: Այս ամենը ոչ մի դեպքում չի կարելի անտեսել, քանի որ կրտսեր դպրոցականը ծնողներից նախևառաջ ակնկալում է բնական և ողջամիտ սեր, աջակցություն և լիարժեք հաղորդակցություն, քանի որ կրթությունը պահանջում է ամենալուրջը, ամենահասարակը և անկեղծը:

Մեր նպատակն է՝ խորհուրդներով օգնել ծնողներին՝ ճանաչելու իրենց և իրենց երեխաներին: Դա կարևոր նախապայման է՝ ընտանիքում երեխայի նպատակաուղղված և համակողմանի դաստիարակության կազմակերպման համար:

Այսպես.

1. Հասարակության ակտիվ քաղաքացիներ դաստիարակելու առումով՝ ընտանիքը պետք է փոխի իր նկարագիրը և ավելի հետևողական ու նպատակային աշխատանք տանի այդ ուղղությամբ: Եթե մինչ այժմ ընտանիքին վճռական դեր է հատկացվում միայն դաստիարակության հարցի լուծման գործում, ապա այսօր դրան պետք է ավելանա նաև կրթության կազմակերպմանը ևս նրան մասնակից դարձնելու հարցը /երեխային դպրոցի համար նախապատրաստել, ընտանիքում երեխային գրաճանաչ դարձնել և այլն/:

2. Ընտանիքում երեխային դպրոցի համար նախապատրաստելու աշխատանքի ճիշտ և արդյունավետ կազմակերպումն էլ ավելի կբարձրացնի ընտանիքի հեղինակությունն ու պատասխանատվությունը աճող սերնդի կրթության և դաստիարակությա ն գործի նկատմամբ:
3. Երեխային համակողմանիորեն դաստիարակելու նպատակով ծնողները պետք է ունենան համապատասխան նախագիտելիքներ և ընտանիքում երեխայի մտավոր զարգացման անհրաժեշտ մակարդակն ապահովելու համար իմանան պահանջվող չափանիշը, տվյալ տարիքում երեխայի մտավոր կարողությունները, որպեսզի դպրոց մուտք գործող երեխան ունենա գիտելիքների պաշար, ճանաչողական հետաքրքրություններ, սովորելու ցանկություն և այլն:
4. Դաստիարակչական ներգործությունը պետք է իրականացվի՝ նկատի ունենալով կոնկրետ պայմանները, կոնկրետ իրադրությունը և կոնկրետ երեխային: Ընտանիքի բոլոր երեխաների նկատմամբ միևնույն դաստիարակչական մեթոդի կիրառումը ճիշտ չէ:
5. Կարևորվում են ծնող-երեխա փոխհարաբերությունները:
6. Ծնողների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել դասախոսություններ ու սեմինարներ՝ երեխաների առողջության, ուսուցման, դաստիարակության, ծնող-երեխա փոխհարաբերությունների վերաբերյալ[4]:

[4] С. А. Козлова, Т. А. Куликова, Дошкольная педагогика, Москва. 2000.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացում ընտանիքի դերի վերաբերյալ սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Յուրաքանչյուր ընտանիքում օբյեկտիվորեն ներկայացվում է որոշակի, դաստիարակության միանգամայն չգիտակցված համակարգ: Այստեղ նկատի է առնվում նաև դաստիարակության նպատակների հասկացությունը, նրանց խնդիրների ֆորմուլավորումը, և դաստիարակության մեթոդների և միջոցների շատ կամ քիչ նպատակաուղղված կիրառումը, այն հաշվառումը, որ կարելի է և չի կարելի թույլ տալ երեխայի հետ շփումում:
2. Համագործակցությունը, որպես ընտանիքում փոխհարաբերությունների տեսակ, ենթադրում է միջանձնային հարաբերությունների միջնորդավորվածություն ընտանիքում՝ գործունեության ընդհանուր նպատակներով և խնդիրներով, նրա կազմակերպվածությամբ և բարձր բարոյական արժեքներով: Ընտանիքը, որտեղ փոխհարաբերությունների հիմնական տեսակ է համարվում համագործակցությունը, ձեռք է բերում հատուկ որակ, դառնում է զարգացման բարձր մակարդակի խումբ՝ կոլեկտիվ:
3. Ծնողների կ ողմից իրականացվող դաստիարակությունն ընտանիքում պետք է ունենա մանկավարժական ուղղվածություն: Անհրաժեշտ է հարգանքով վերաբերվել երեխաների հարցերին ու հետաքրքրություններին, խնամք ցուցաբերել նրանց աշխատանքի նկատմամբ, գնահատել ու խրախուսել նրանց նորարարությունն ու նախաձեռնությունը: Ծնողները և ընտանիքի մեծահասակ մյուս անդամները երեխային պետք է դ իտեն որպես գործուն անձնավորության և նպաստեն նրա ընդունակությունների զարգացմանը: Հարկավոր է լսել երեխաների դատողությունները, կատարել մտածված ուղղումներ, հավատալ նրանց ներթաքույց հնարավորություններին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2004:
2. Լ. Վ. Թորգոմյան, «Մանկավարժության ընդհանուր հիմունքներ», Երևան, 2005:
3. Азбука социального психолога.
4. Богомолова Н.Н. Социальная психология.
5. Всё о младшем школьнике под редакцией Виноградовой, М., «Вентана-Граф», 2004.
6. Концепция дошкольного воспитания, Москва. 2000.
7. Подласый И.П. Педагогика.
8. С. А. Козлова, Т. А. Куликова, Дошкольная педагогика, Москва. 2000.
9. Сатир В. "Как строить себя и свою семью." М.: "Педагогика - Пресс", 1992 г.
10. Сластёнин В. А., И. Ф. Исаев, Е. Н. Шиянов Педагогика: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений; Под ред. В. А. Сластёнина. — М.: Издательский центр "Академия", 2002.